ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 048-ԱՌՈՐՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջեի եկամտային մասը 2025 թվականի 1-ին եռամսյակում ունի հետևյալ տեսքը.

	Պլան /հազար դրամ/	Կատարված /հազար դրամ/	
Վարչական բյուջե ,	**703894.0**	**731999.3**	**104 %**
որից՝ սեփական եկամուտներ	222932.5	251326.3	112.7 %
Ֆոնդային բյուջե	**185500.0**	**150000.0**	**80.9%**
որից՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկ.	150000.0	150000.0	
Ընդամենը	**739394.0**	**731999.3**	**99%**

Արմավիր համայնքի 2025թվականի բյուջեի առաջին եռամսյակում ընդամենը նախատեսված 739394,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 731999,3 հազար դրամ կամ կատարվել է 99 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 222932,5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 251326,3 հազար դրամ կամ կատարվել է 112,7 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ վարչական բյուջեի եկամուտները գերակատարվել են 87 630,4 հազար դրամով կամ 13,6% -ով, իսկ սեփական եկամուտները՝ 18913,7 հազար դրամով կամ 8,1 % -ով:

Արմավիր համայնքի 2025թվականի բյուջեն առաջին եռամսյակում ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային եկամուտների գծով առաջին եռամսյակում նախատեսված 137708.1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 168225,8 հազար դրամ կամ կատարվել է 122,2% -ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 37965,0 հազար դրամով կամ 29,1% -ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 7329,6 հազար դրամ,
2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 1139,9 հազար դրամ:
3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 74206,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 89183,2 հազար դրամ կամ կատարվել է 120,2%-ով,նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ թերակատարվել է 2926,5հազար դրամով,
4. Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկը պլանով նախատեսված 49618,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 35513,5 հազար դրամ կամ կատարվել է 71,6 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 10608,5 հազար դրամով կամ 42,5% -ով՝ այդ թվում.

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով առաջին եռամսյակում նախատեսված 19519,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 35059,7 հազար դրամ կամ կատարվել՝ 179,6 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 3310,1 հազար դրամով կամ 15,2% -ով՝ այդ թվում.

1. Պետական տուրքերի գծով նախատեսված 6619,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 9598,7 հազար դրամ կամ կատարվել՝ 145,0 %-ով:
2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 12900,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 25461,0 հազար դրամ կամ կատարվել՝ 197,4 %-ով:
3. Նույն թվում

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերի գծով փաստացի մուտքագրվել է 940,0 հազար,

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերի գծով փաստացի մուտքերը կազմել են 72,0 հազար,

գ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար դիմաց փաստցի մուտքերը կազմել են 35.0 հազար դրամ,

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար փաստացի մուտքերը կազմել են 6136,1 հազար դրամ,

ե) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 1558,0հազար,

զ) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 5845,0 հազար դրամ,

է) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար տարեկան նախատեսված 1600,0 հազար դրամի դիմաց 1-ին եռամսյակում հավաքագրվել է 1645,0 հազար դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 102,8 %-ով,

ը) համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով 1-ի եռամսյակում փաստացի մուտքագրվել է 6383,3 հազար դրամ:

թ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարեկան թույլտվության համար տարեկան նախատեսվել է 1250,0 հազար դրամ եկամուտ, արդեն իսկ 1-ին եռամսյակում փաստացի հավաքագրվել է 1200,0 հազար դրամ կամ կամ տարեկան պլանը կատարվել է 96,0 %-ով,

ժ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 1046,5 հազար դրամ,

ի)Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար տարեկան նախատեսվել է 750,0 հազար, 1-ին եռամսյակում փաստացի հավաքագրվել է 400,0 հազար դրամ կամ կամ տարեկան պլանը կատարվել է 88,9 %-ով,

լ) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 200,0 հազար դրամ:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

1. Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 514962,3 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 479473,6 հազար դրամ կամ կատարվել է 93,1 %-ով, այդ թվում՝

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 478878,8 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 478878,8 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

բ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 583,5 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 594,8 հազար դրամ կամ կատարվել է 101,9 %-ով:

2. Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 35500,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքեր չեն եղել:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 76547,7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել 84299,9 հազար դրամ կամ կատարվել է 110,1 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 12698,3 հազար դրամով կամ 17,7% -ով՝ այդ թվում.

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության գծով փաստացի մուտքերը կազմել են 11856,5 հազար դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 1142,4 հազար դրամով կամ 10,7% -ով
2. Գույքի վարձակալության գծով փաստացի մուտքագրվել է 636,1 հազար դրամ :
3. Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 1499,3 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 1199,4 հազար դրամ:
4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարների գծով տարեկան նախատեսված 1521,5 հազար դրամի փաստացի մուտքը կազմել է 1718,6 հազար դրամ կամ կատարվել է 113 %-ով:
5. Տեղական վճարների գծով նախատեսված 66705,5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 48437,8 հազար դրամ կամ կատարվել է 72,6 % - ով, այդ թվում աղբահանության

վճարների գծով նախատեսված 21744,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 15411,5 հազար դրամ կամ կատարվել է 70,9 % - ով:

6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 4200,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1488,7 հազար դրամ:

7. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 250,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 750 հազար դրամ:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով փաստացի մուտքը 1-ին եռամսյակին կազմել է 16600,9 հազար դրամ :

ԾԱԽՍԵՐ

2025թվականի առաջին եռամսյակում կատարվել է 687937,7 հազար դրամի ծախս, որը կազմում է տարեկան պլանի 17,4%-ը: Ծախսերի դասակարգումն ըստ գործառնական նշանակության հետևյալն է.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ կատարվել է 204690,7 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 29,7%-ը,այդ թվում՝

1. Օրենսդիր և գործադիր մարմիններ՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս, հատկացվել է 95392,1 հազար դրամ ծախս,

2.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 01 բաժին 6 խումբ 1 դաս, հատկացվել է 109298,6 հազար դրամ ծախս,

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ կատարվել է 143789,0 հազար դրամի ծախս,որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 20,9%-ը,այդ թվում՝

1.Ոռոգում՝՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս, հատկացվել է 12028,3 հազար դրամ,

2. Ճանապարհային տրանսպորտ՝ 04 բաժին 5 խումբ 1 դաս, հատկացվել է 179046,7 հազար դրամ,

3. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր՝ 04 բաժին 9 խումբ 1 դաս, նախատեսված -26000,0 դիմաց փաստացի մուտքերը կազմել են -47286,0 հազար դրամ :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ Աղբահանում՝ 05 բաժին 1 խումբ 1 դաս, կատարվել է 73302,8 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 10,7%-ը:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝

կատարվել է 30 094,6 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 4,4%-ը, այդ թվում՝

1.Ջրամատակարարում 06 բաժին 3 խումբ 1 դաս, հատկացվել է 17395,1 հազար դրամ,

2.Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1 դաս, հատկացվել է 10517,5 հազար դրամ,

3.Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)՝ 06 բաժին 6 խումբ 1 դաս, հատկացվել է 2182,0 հազար դրամ:

ՀԱՆԳԻԱՏ. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ՝ կատարվել է 22337,3 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 3,2%-ը:

1.Գրադարաններ՝ 08 բաժին 2 խումբ 1 դաս, հատկացվել է 7312,3 հազար դրամ,

2.Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ՝ 08 բաժին 2 խումբ 3 դաս, հատկացվել է 7706,5 հազար դրամ,

3.Այլ մշակութային կազմակերպություններ՝ 08 բաժին 2 խումբ 4 դաս, հատկացվել է 7318,4 հազարդրամ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ կատարվել է 213723,3 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 31,1%-ը, այդ թվում՝

1.Նախադպրոցական կրթություն՝ 09 բաժին 1 խումբ 1 դաս, հատկացվել է 169278,0 հազար դրամ,

2. Արտադպրոցական դաստիարակություն՝ 09 բաժին 5 խումբ 1 դաս, հատկացվել է 44445,3 հազար դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ծրագրով ծախսեր չեն կատարվել:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ՝ Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1 խումբ 2 դաս՝ նախատեսված գումարը կազմում է 871216,8 հազար դրամ, որից 500000,0 հազար դրամը նախատեսվում է հատկացնել ֆոնդային բյուջեով կատարվող ծախսերի ֆինանսավորմանը, հաշվետու ժամանակահատվածում հատկացվել է 150000,0 հազար դրամ:

2025 թվականի 1-ին եռամսյակում ընթացիկ ծախսերի /վարչական բյուջե/ ֆինանսավորմանը հատկացվել է 403047,2 հազար դրամ, որը փաստացի կատարված ծախսերի 54.8 %-ն է: Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին հատկացվել է 107190.6 հազար դրամ կամ վարչական ծախսերի 34.6%-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը հատկացվել է 62876.7 հազար դրամ կամ 15.6%-ը: Սուբսիդիաների տեսքով ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի փաստացի կատարված ծախսերի 48.9 %-ը կամ 197124.7 հազար դրամ: Դրամաշնորհ է հատկացվել վարչական բյուջեի ծախսերի 0.2 %-ը, այլ ծախսերին է տրամադրվել 0.5 %-ը, սոցիալական օգնությանը՝ 0.02 %-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեի ծախսերի 45.2 %-ը կամ 332176.5 հազար դրամն ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը, այդ միջոցներից 317750.4 հազար դրամը կամ 95.7 %-ը տրամադրվել է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման հոդվածին, 1409.9 հազար դրամը՝ մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար, 25000.0 հազար դրամը կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 7.5 %-ը հատկացվել է նախագծահետազոտական աշխատանքների ձեռք բերմանը, 5000.0 հազար դրամը՝ հողի ձեռք բերմանը: Համայնքային սեփականություն հանդիսացող հողի իրացումից մուտքերը արտացոլվում են ծախսերում բացասական նշանով, 1-ին եռամսյակում տարեկան նախատեսված -26000,0 դիմաց փաստացի մուտքերը կազմել են -47286,0 հազար դրամ :

ԲՅՈՒՋԵԻ ՍԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արմավիր համայնքի բյուջեի 2025 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 602808.9 հազար դրամ, իսկ առաջին եռամսյակի փաստացի հավելուրդը կազմել է 646870.5 հազար դրամ: